Մալքոմ Գլեդվելլ. Վճռական Պահ.
Ինչպես կարող են փոքր երեւույթները մեծ փոփոխություններ բերել:

(Նիվ Հորք, Լիթթլ Բրոուն, 2000թ.)

Բացառիկ մարդկանց օրենքը: Սոցիալական համաճարակները աշխատում են միեւնույն սկզբունքով: Դրանք նույնպես առաջացել են մի քանի բացառիկ մարդկանց ջանքերով:

Դա գալիս է նրանից, թե ինչքանով են նրանք շփվող, ինչքանով են եռանդուն կամ ազդեցիկ իրենց հավասար մարդկանց շրջապատում:

Վերոյիշյալ օրենքն ասում է, որ այդ բացառիկ մարդկանցից մեկը նշմարեց հասարական նոր միտում եւ իր սոցիալական կապերի, եռանդի, խանդավառության ու անհատականության շնորհիվ տարածեց այն (էջ 21-22):

Կպչողականության գործոնը: Կպչողականության գաղափարը վիթխարի նշանակություն ունի վճռականության մեջ, այն իմաստով, թե ինչպես ենք մենք վերաբերում սոցիալական համաճարակներին:

Մենք շատ ժամանակ ենք ծախսում միայն մտածելով, թե ինչպես հաղորդագրություններն առավել վարակիչ դարձնենք եւ ինչպես մեր ստեղծածով ու գաղափարներով հնարավորին չափ շատ մարդկանց նվաճենք: Սակայն հաղորդկացման կարեւոր դրույթներից մեկը մեր համոզվածությունն է այն բանում, որ հաղորդագրությունը չի մտնի մարդու մի ականջից եւ դուրս գա մյուսից:

Կպչողականությունը նշանակում է, որ հաղորդագրությունը ազդեցություն է գործում: Դու չես կարող այն հանել գլխիցդ, քանի որ այն դաջվում է քո ուղեղում:

Կպչողականության գործոնն ասում է, որ հատուկ ձեւեր եւ միջոցներ կան վարակիչ հաղորդագրությունները հիշելի դարձնելու համար, սակայն ինֆորմացիայի ստեղծման եւ մատուցման մեջ համեմատաբար ավելի պարզ փոփոխություններ են կիրառվում, որոնք կարող են մեծ տարբերություն տալ նրա ներգործության չափի մեջ (էջ 24-25):

Կոնտեքստի Գործոնը:

Մի փորձի ընթացքում, երբ մարդիկ մենակ են նստած մի սենյակում, որի դրան անցքից ծուխ էր լցվում սենյակը, 75 տոկոսը քայլեր ահազանգեցին այդ ծխի

մասին, իսկ երբ խմբով էին նստած, միայն միայն 38 տոկոսը ահազանգեցին դրա մասին:

Այլ կերպ ասած, երբ մարդիկ խմբով են, նրանց գործելու պատասխանատվությունը նվազում է: Նրանք մտածում են, որ մեկ ուրիշը՝ տեսնելով ծուխը՝ կարձագանքի, կամ մտածում են, քանի որ ոչ մեկը ոչ մի քայլ չի անում, ուրեմն ակներեւ խնդիրը այնքան էլ լուրջ չէ (էջ 25):

Մի քանիսի օրենքը: Կապակցողներ, գիտուն մարդիկ, առեւտրականներ:

Կապակցող– Փոլ Ռեւեր - կարող է բերնե-բերան լուրը տարածելու համաճարակ պատճառել: Սոցիալական նվերների բացառիկ հավաքածու (33):

Վեց աստիճանով տարանջատումը դեռ չի նշանակում, որ բոլորն են իրար հետ կապված ճիշտ վեց քայլով: Դա նշանակում է, որ շատ քչերն են բոլոր մնացած մարդկանց հետ կապված մի քանի քայլով, եւ որ մնացածներս աշխարհի հետ կապված ենք հենց այս մի քանի առանձնահատուկ քայլերի միջոցով: Իրականում, իմ սոցիալական շրջանը բուրգ է, եւ ոչ թե շրջան: Իսկ այդ բուրգի գագաթին այն միակ մարդն է, ով պատասխանատու է իմ կյանքը կազմող ծանոթությունների ճնշող մեծամասնության համար: Բացի նրանից, որ իմ սոցիալական շրջանը շրջան չէ, այն նույնիսկ իմը չէ: Այն Հակոբինն է: Սա ավելի շատ նման է մի ակումբի, որին նա հրավիրել է ինձ անդամակցել:

Կապակցողները նրանք են, ովքեր օժտված լինելով աշխարհը միավորելու հատուկ շնորհքով՝ կապում են մեզ աշխարհի եւ այլ մարդկանց հետ, ովքեր ներկայացնում են մեզ մեր սոցիալական շրջաններին եւ ում մենք վստահում ենք ավելի շատ, քան կարծում ենք:

Ինչ՞ն է մարդուն դարձնում Կապակցող: Առաջին եւ ամենաակներեւ չափանիշն այն է, որ Կապակցողները բավականին շատ մարդկանց գիտեն: Նրանք մարդկանց այն տեսակին են պատկանում, ովքեր բոլորին գիտեն:

Բոլորս էլ գիտենք այդպիսի մարդկանց, բայց ես չեմ կարծում, որ մենք կարեւորություն ենք տալիս այդպիսի մարդկանց:

Ես նույնիսկ վստահ չեմ, որ մեծամասնությունը իրոք հավատում է, որ նրանք բոլորին գիտեն: Բայց նրանք իսկապես գիտեն բոլորին եւ դա ապացուցելու շատ պարզ եղանակ կա...

Ամեն քայլափոխին հանդիպող մարդիկ, այլ կերպ ասած՝ մարդկանց խումբ, օժտված ընկերներ եւ ծանոթներ ձեռք բերելու արտասովոր ճարպկությամբ՝ սրանք են Կապակցողները:

Կապակցողները սոցիալական կապեր ստեղծելու բնազդ եւ բնածին շնորհք ունեն: Նա հատուկ մտադրությամբ չի անուն:

Նա այն չափից դուրս շփվող մարդկանցից չէ եւ ոչ էլ ցուցադրողական մտերմություն անողին, ում համար ծանոթություն ձեռք բերելը ակներեւ է եւ միտումնավոր:
Կապակցողն ավելի շատ դիտորդի է նման, ինքնամփոփ, օժտված հմուտ վարվելակերպով, ով ավելի շատ գերադասում է հեռավորություն պահպանել:

Նա պարզապես սիրում է մարդկանց անկեղծ սիրով, եւ նրա համար անսպառ հետաքրքրություն է առաջացնում մարդկաց ծանոթանալու եւ փոխհարաբերվելու ձեւերը:

Կապակցողների կարեւորությունը կայանում է ոչ միայն իրենց ծանոթների թվաքանակում, այլ այդ ծանոթների որակի մեջ: Կապակցողները ծանոթների հետ «թույլ կապերի» ցանց են ստեղծում:

Նրանք այն մարդիկ են, որոնք հասանելի են մի քանի քայլով, քանի որ այս կամ այն պատճառով, նրանք շփվում են բազմաթիվ տարբեր ազդեցության գոտիների, ենթամշակույթների եւ յուրահատուկ դերեր եւ դիրքերում:

Նրանց պարագայում բազմաթիվ եւ միաժամանակ տարբեր ազդեցության գոտիներում ներկայանալու ունակությունը իրենց անհատականությանը ներհատուկ արդյունք է՝ այսինքն, հետաքրքրասիրության, ինքնավստահության, շփվողականության եւ եռանդունության ինչ-որ համակցություն: